Luys Lույս®

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ

*Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2018թ.) հիման վրա*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Ընդհանուր բնութագիր** ..... 1

**Մեթոդաբանություն** ..... 1

**Հայաստանի գնահատականները** ..... 5

**Հայաստանը տարածաշրջանի համապատկերում** ..... 6

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1995 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարի փետրվար-մարտ ամիսներին «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպությունը հրապարակում է «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» զեկույցը աշխարհի գրեթե բոլոր երկրների համար: 2018-ին կառույցի կողմից ուսումնասիրվել են 180 երկրների, այդ թվում՝ Հայաստանի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակը: Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (այսուհետ՝ ԿԸԻ) բաղադրյալ գնահատական է՝ 0-ից մինչև 100 միջակայքում, ընդ որում՝ 100-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին, իսկ 0-ն՝ լիովին կոռումպացված երկրներին: Ինդեքսը տալիս է կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով պետություններն ըստ ինդեքսի արժեքների: Բացի առանձին երկրների Կոռուպցիայի ընկալման ինդեքսից, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլի» հրապարակումներում տրվում են նաև ստանդարտ շեղման հիման վրա հաշվարկված կոռուպցիայի ընկալման ինդեքսի վստահելիության միջակայքը, այսինքն՝ ստորին և վերին սահմանները: Միջակայքը մեկնաբանելու համար պետք է հաշվի առնել, թե այդ ինդեքսի ստացման համար քանի ուսումնասիրություններ են օգտագործվել (որքան շատ ուսումնասիրություններ են օգտագործվել, այնքան մեծ է միջակայքի վստահելիությունը):

2018թ. ԿԸԻ արդյունքները ցույց են տալիս, որ երկրների մեծ մասում փոփոխություններ չկան, կամ այդ փոփոխություններն էական չեն: 2018թ. վերլուծության արդյունքում ներկայացվել է նաև կոռուպցիայի և ժողովրդավարության համաշխարհային ճգնաժամի միջև առկա դրական փոխկապակցվածությունը:

Կոռուպցիայի ամենացածր մակարդակը, ըստ ինդեքսի, Նոր Զելանդիայում է, որին հաջորդում են՝ Դանիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Շվեյցարիան, իսկ ամենացածր ԿԸԻ մակարդակով աչքի են ընկել Սոմալին, Հարավային Սուդանը և Սիրիան:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԸԻ 2018թ. տվյալները հիմնված են աշխարհի 180 երկրներում անցկացված 13 ուսումնասիրությունների և փորձագիտական գնահատումների վրա, որոնք չափում են հանրային ոլորտում կոռուպցիան՝ 0-ից 100 սանդղակի վրա տալով յուրաքանչյուր երկրի ԿԸԻ արժեքը: Ինդեքսը կազմվում է մի շարք միջազգային կառույցների հետազոտությունների, ինչպես նաև անկախ կազմակերպությունների կողմից տարբեր երկրներում գործարարների, վերլուծաբանների և փորձագետների շրջանում

իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքների հիման վրա: Ինդեքսը կազմելիս հաշվի են առնվում ներդրումային ռիսկերը, խոսքի ազատությունը, բնակչության կենսամակարդակը, բիզնեսի վարման դժվարությունները, նաև այլ գործոններ:

2018թ. աշխարհի բոլոր երկրների ԿԸԻ գնահատման համար «Թրանսփարենսի Ինթերնեյշնլը» որպես աղբյուր օգտագործել է կոռուպցիային վերաբերող 13 գնահատականներ[1], որոնցից հատկանշական են «Էկոնոմիստ» թերթի «Ժողովրդավարութուն» ինդեքսը[2], որը կիրառվել է ԿԸԻ և ժողովրդավարության համաշխարհային ճգնաժամի միջև խաչաձև վերլուծության համար, Ֆրիդոմ Հաուսի «Ազատությունն աշխարհում»[3] զեկույցը և Ժողովրդավարության բազմազանության ծրագրի «Ժողովրդավարություն» տարեկան զեկույցը[4]: Ստացված գնահատականները ևս սահմանվում են 0-ից 100 միջակայքում, իսկ ԿԸԻ արժեքը ստացվում է գնահատականների միջին թվաբանականի արդյունքում:

Հայաստանի 2018թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի գնահատման համար «Թրանսփարենսի Ինթերնեյշնլը» որպես աղբյուր օգտագործել է կոռուպցիային վերաբերող 6 գնահատականներ.

**1. Բերթելսմանի հիմնադրամի 2017-2018թ. «Տրանսֆորմացիա» ինդեքսը (BF (TI):** Ինդեքսը նպատակ ունի չափել ժողովրդավարության վերափոխման արդյունավետությունը և ոչ ազատական երկրների շուկայական տնտեսությունները: Այն չափում և համեմատում է երկրների կառավարման որակը, անցումային գործընթացները և վերջիններիս ազդեցությունները: «Տրանսֆորմացիա» ինդեքսը հիմնված է 17 գործոնների վերլուծության վրա, որոնք բաժանված են 3 հիմնական խմբի՝ քաղաքական անցում, տնտեսական անցում և կառավարում[5]:

**2. Գլոբալ Ինսայթի 2017թ. «Երկրի ռիսկայնության վարկանիշները» (GI):** Ռիսկայնության վարկանիշները գնահատելիս հաշվի են առնվում քաղաքական ռիսկերը,

[1] https://transparency.am/storage/CPI2018_SourceDescription_arm.pdf

[2] http://www.eiu.com/topic/democracy-index

[3] https://freedomhouse.org/report-types/freedom-world

[4] https://www.v-dem.net/en/news/democracy-all-v-dem-annual-democracy-report-2018

[5] https://www.bertelsmann-stiftung.de/fileadmin/files/BSt/Publikationen/imported/leseprobe/LP_978-3-86793-848-8_1.pdf

քաղաքական բռնությունները և անվտանգությունը, օրենքի գերակայությունը, Կառավարության գործունեության արդյունավետությունը և մի շարք այլ գործոններ[6]:

### 3. Ֆրիդոմ Հաուսի «Անցումային փուլում գտնվող պետություններ» 2018թ. զեկույցը (FH):

Զեկույցը ժողովրդավարության ուսումնասիրման հետազոտական նախագիծ է, որը դիտարկում է Կենտրոնական Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի նախկին 29 կոմունիստական երկրներում ժողովրդավարական իրավիճակը և զարգացումները՝ հիմնվելով յոթ հիմնական գործոնների վրա՝ պետական ժողովրդավարական կառավարում, ընտրական գործընթացներ, քաղաքացիական հասարակություն, անկախ ԶԼՄ-ներ, տեղական ժողովրդավարական կառավարում, դատական իշխանության կառուցվածք, անկախություն և կոռուպցիա[7]:

### 4. Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2018թ. իրականացված «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման» արդյունքները (WEF):

Այս հարցման նպատակն է ձեռք բերել այնպիսի տեղեկատվություն, որը վիճակագրորեն չափել անհնարին կամ շատ դժվար է[8]:

### 5. Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեյշնլի «Երկրի միջազգային ռիսկի ուղեցույցի» 2018թ. գնահատականները (PRS):

Ուղեցույցը հանդիսանում է շուրջ 140 երկրների ռիսկերի վերլուծության և գնահատման լավագույն աղբյուրներից մեկը: Ռիսկերի գնահատման հիմքում դրվում են այնպիսի ցուցանիշների ուսումնասիրությունը, ինչպիսիք են Կառավարության կայունությունը, երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, ներքին և արտաքին կոնֆլիկտները,

---

[6] Սկսած 2015 թվականից՝ Գլոբալ Ինսայթը դադարեցրել է տրամադրել իր տվյալները «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» ընկերությանը: 2018թ. ԿԸԻ-ն հաշվարկելու համար Գլոբալ Ինսայթի տվյալները մատչելի են դարձել 2018թ. սեպտեմբերին հրապարակված՝ Համաշխարհային բանկի կառավարման համաշխարհային ցուցանիշների (World Governance Indicators) պորտալի միջոցով, որտեղ դիտարկվում են վեց հիմնական ցուցանիշներ՝ լսելիություն և հաշվետվողականություն, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարման արդյունավետություն, կանոնակարգման որակ, օրենքի գերակայություն և կոռուպցիայի վերահսկողություն: Մանրամասն՝ http://info.worldbank.org/governance/wgi/#home

[7] https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2018

[8] http://www3.weforum.org/docs/GCR2018/04Backmatter/2.%20Appendix%20B.pdf

ժողովրդավարության խնդիրները, կրոնական սահմանափակվածությունը, ռազմական էլիտայի ներգրավվածությունը քաղաքականության մեջ և այլն[9]:

## 6. «Ժողովրդավարության բազմազանության» ծրագրի 2018թ. արդյունքները[10] (VDEM):

«Ժողովրդավարության բազմազանության» ծրագիրը նպատակ ունի ներկայացնել աշխարհում և ըստ յուրաքանչյուր երկրի ժողովրդավարության մակարդակը: Ծրագրի շրջանակներում ներկայացվում են շուրջ 201 երկրների համար ժողովրդավարությանը առնչվող տվյալներ, որոնք համակարգվում են յոթ սկզբունքների մեջ: Դրանք են՝

- ժողովրդավարության ընտրական սկզբունք, որը հիմնված է Դալի «Պոլիարխիայի» տեսության վրա՝ պարբերական ընտրությունների միջոցով հաշվետվողականության հաստատում,
- ժողովրդավարության լիբերալ (ազատական) սկզբունք, որը կոչված է բացառելու «մեծամասնության գերիշխանությունը»,
- մասնակցողականության սկզբունք, որը կարևորում է ոչ ընտրական մեխանիզմների միջոցով քաղաքացիների ներգրավումը կառավարման գործընթացին,
- խորհրդակցականության սկզբունք, որով սահմանվում է իշխանության և հասարակության միջև երկխոսության հաստատման կարևորությունը,
- հավասարության կամ հավասարազորության սկզբունք, որը ներկայացնում է հասարակության շերտերի ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներում,
- մեծամասնականության սկզբունք, որը սահմանում է հասարակության մեծամասնության իրավունքը՝ քաղաքականության մշակման հարցում արտահայտելու իր կարծիքը,
- համերաշխության կամ համաձայնության սկզբունք, որը ամրագրում է քաղաքական փոքրամասնության և այլ շահային խմբերի իրավունքների պաշտպանությունը և քաղաքականության մշակման գործընթացում մասնակցությունը[11]:

---

[9] https://www.prsgroup.com/

[10] Հետազոտություններից 5-ը կատարվել են մինչև 2018թ. ապրիլ-մայիս ամիսները, և միայն Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեյշնլի «Երկրի միջազգային ռիսկի ուղեցույցի» գնահատականներն են իրականացվել 2017թ. սեպտեմբեր - 2018թ. օգոստոս ժամանակահատվածի համար:

[11] https://www.v-dem.net/en/news/democracy-all-v-dem-annual-democracy-report-2018

2012թ. «Թրանսփարենսի Ինթերնեյշնլը» վերանայել է ինդեքսի հաշվարկման համար օգտագործվող մեթոդաբանությունը, որի արդյունքում 2012-ից հետո ցուցանիշները դարձել են միմյանց հետ համադրելի[12]:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2018 թվականին Հայաստանը դիտարկվող 180 երկրների շարքում 100 հնարավոր միավորից ձեռք է բերել 35 միավոր, իսկ ստանդարտ շեղման չափը կազմել 4.00, ինչի արդյունքում երկիրը Ալժիրի, Բրազիլիայի, Կոտ դ'Իվուարի, Եգիպտոսի, Սալվադորի, Պերուի, Թիմոր-Լեստեի և Զամբիայի հետ միասին կիսել է 105-րդ հորիզոնականը: 2018-ին 2017-ի համեմատությամբ Հայաստանի ԿԸԻ ինդեքսի արժեքը չի փոխվել, սակայն 2017-ին դիտարկվող նույն 180 երկրների շարքում երկիրը զբաղեցնում էր 107-րդ հորիզոնականը: Դիտարկվող տարիներին Հայաստանը ԿԸԻ ցուցանիշով լավագույն արդյունք է դրսևորել 2014-ին, իսկ վատագույն արդյունք՝ 2016-ին: 2016-ին ՀՀ ցուցանիշի վատթարացումը պայմանավորված չէ դիտարկվող երկրների քանակի ավելացմամբ, այլ պայմանավորված է Հայաստանի համեմատ դիտարկվող այլ երկրների ցուցանիշների ավելի մեծ տեմպերով բարելավմամբ:

**Գծապատկեր 1. ՀՀ ԿԸԻ արժեքները և զբաղեցրած հորիզոնականը**




ՀՀ 2018թ. ԿԸԻ ցուցանիշի բարելավումը 2016-ի համեմատ պայմանավորված է գրեթե բոլոր դիտարկվող ցուցանիշների բարելավմամբ, իսկ 2017-ի համեմատ՝

[12] www.transparency.org/research/cpi

պայմանավորված է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման» և «Ժողովրդավարության բազմազանության» ծրագրի արդյունքների բարելավմամբ:

**Աղյուսակ 1. ՀՀ ԿԸԻ հաշվարկման ցուցանիշները**

| Տարի/Ցուցանիշ | Երկրի դիրքը | ԿԸԻ արժեքը | BF (TI) | FH | GI | PRS | WEF | VDEM |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2016** | 113 | 33 | 28 | 41 | 34 | 32 | 45 | 17 |
| **2017** | 107 | 35 | 33 | 42 | 35 | 32 | 47 | 20 |
| **2018** | 105 | 35 | 33 | 39 | 35 | 32 | 51 | 21 |

Ֆրիդոմ Հաուսի «Անցումային փուլում գտնվող պետություններ» ցուցանիշով որպես հիմնական հետընթաց 2018թ. զեկույցում նշվում է համակարգային կոռուպցիայի առկայությունը, մնացած ցուցանիշները մնացել են անփոփոխ: 2018թ. Բերթելսմանի հիմնադրամի «Տրանսֆորմացիա» ինդեքսի ցուցանիշները 2016-ի համեմատ դրական զարգացում են ցուցաբերել, որը հիմնականում պայմանավորված է իշխանության տարբեր ճյուղերի տարանջատմամբ, անկախ դատական համակարգի, պաշտոնական դիրքի չարաշահման դեմ պայքարի, շահային խմբերի ինստիտուտի զարգացման և սոցիալական կապիտալի հզորացման ցուցիչներով:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հարևան երկրների հետ ՀՀ ԿԸԻ ցուցանիշը համադրելիս, ակնհայտ է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018-ին Հայաստանը շարունակում է զիջել Վրաստանին (ԿԸԻ՝ 58, հորիզոնական՝ 41) և Թուրքիային (ԿԸԻ՝ 41, հորիզոնական՝ 78): Հայաստանի մյուս հարևանները՝ Ադրբեջանը (ԿԸԻ՝ 25, հորիզոնական՝ 152) և Իրանը (ԿԸԻ՝ 28, հորիզոնական՝ 138) դիտարկվող տարիներին մշտապես զիջել են ՀՀ ցուցանիշներին:

**Գծապատկեր 2. ՀՀ և հարևան երկրների ԿԸԻ արժեքները 2012-2018թթ.**




2018-ին 2017-ի համեմատ Հայաստանի ԿԸԻ արժեքը չի փոխվել, սակայն 2018-ին ՀՀ-ն բարելավել է դիրքերը երկու հորիզոնականով: Հարկ է նշել, որ Ադրբեջանը ԿԸԻ 2018թ. դասակարգման աղյուսակում ներառված 180 երկրների շարքում գրանցել է ամենամեծ նահանջը՝ 6 կետ (2017թ. Ադրբեջանի ԿԸԻ արժեքը եղել է 31), որի արդյունքում 30 հորիզոնականով նվազել է նաև Ադրբեջանի զբաղեցրած հորիզոնականը: Իրանի դեպքում անկումը ևս մեծ է: Իրանի ԿԸԻ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է երկու միավորով, որը հանգեցրել է Իրանի զբաղեցրած դիրքի նվազեցմանը 8 հորիզոնականով: Վրաստանը 2018-ին նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքերը 5 հորիզոնականով, Թուրքիան՝ 3 հորիզոնականով:

**Աղյուսակ 2. ՀՀ և հարևան երկրների ցուցանիշների փոփոխությունը 2017-2018թթ.**

| Երկիր | ԿԸԻ 2018թ. | ԿԸԻ 2017թ. | ԿԸԻ փոփոխություն 2017-2018 | ԿԸԻ հիման վրա զբաղեցրած հորիզոնական 2018 | ԿԸԻ հիման վրա զբաղեցրած հորիզոնական 2017 | ԿԸԻ հիման վրա զբաղեցրած հորիզոնականի փոփոխություն 2017-2018թթ. |
|---|---|---|---|---|---|---|
| Վրաստան | 58 | 56 | ⇧ **2** | 41 | 46 | ⇧ **5** |
| Թուրքիա | 41 | 40 | ⇧ **1** | 78 | 81 | ⇧ **3** |
| Հայաստան | 35 | 35 | ⇨ **0** | 105 | 107 | ⇧ **2** |
| Իրան | 28 | 30 | ⇩ **-2** | 138 | 130 | ⇩ **-8** |
| Ադրբեջան | 25 | 31 | ⇩ **-6** | 152 | 122 | ⇩ **-30** |

Բելառուսից բացի, ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ԿԸԻ արժեքները 2012-ից ի վեր ցածր են եղել ՀՀ ցուցանիշներից: Մասնավորապես՝ Ռուսաստանի 2018թ. ԿԸԻ արժեքը կազմել է 28 միավոր (138-րդ հորիզոնական), Ղրղզստանինը՝ 29 (132-րդ հորիզոնական), իսկ Ղազախստանինը՝ 31 միավոր (124-րդ հորիզոնական): Մինչև 2015 թվականը ներառյալ՝ ՀՀ-ն ԿԸԻ ցուցանիշով գերազանցել է դիտարկվող բոլոր երկրների ցուցանիշները, սակայն սկսած 2016-ից ՀՀ-ն ԿԸԻ ցուցանիշով սկսել է զիջել Բելառուսին:

**Գծապատկեր 3. ՀՀ և ԵԱՏՄ մյուս երկրների ԿԸԻ արժեքները 2012-2018թթ.**




Տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 10-րդ հորիզոնականը՝ զիջելով, ինչպես նշեցինք, նախկին խորհրդային հանրապետություններից Վրաստանին (ԿԸԻ՝ 58, հորիզոնական՝ 41), որը

տարածաշրջանի առաջատարն է և Բելառուսին (ԿԸԻ՝ 44, հորիզոնական՝ 70), որը տարածաշրջանում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը: Տարածաշրջանի լավագույն դիրքերում հայտնված Վրաստանին Բերթելսմանի հիմնադրամի «Տրանսֆորմացիայի» ինդեքսի արդյունքներով ՀՀ-ն զիջում է 20 միավորով, Ֆրիդոմ Հաուսի «Անցումային փուլում գտնվող պետություններ» զեկույցի արդյունքներով՝ 11 միավորով, Գլոբալ Ինսայթի «Երկրի ռիսկայնության վարկանիշները» գնահատականներով՝ 12 միավորով, Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից իրականացված «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման» արդյունքներով՝ 19 միավորով, իսկ «Ժողովրդավարության բազմազանության» ծրագրի արդյունքներով՝ 46 միավորով:

## Աղյուսակ 3. ՀՀ և տարածաշրջանի երկրների ԿԸԻ հաշվարկման ցուցանիշները[13]

| Երկրի դիրքը Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների շարքում | Երկրի դիրք դիտարկվող 180 երկրների շարքում | Երկիր | 2018թ. ԿԸԻ արժեքը | Աղբյուրների թիվը | BF(SGI) | BF(TI) | EIU | FH | GI | IMD | PRS | WB | WEF | WJP | VDEM |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1** | **41** | Վրաստան | 58 | 6 | | 53 | | 50 | 47 | | | | 70 | 63 | 67 |
| **2** | **67** | Չեռնոգորիա | 45 | 5 | | 53 | | 47 | 47 | | | | 52 | | 28 |
| **3** | **70** | Բելառուս | 44 | 7 | | 37 | 55 | 33 | 47 | | 32 | | | 57 | 50 |
| **4** | **78** | Թուրքիա | 41 | 9 | 26 | 41 | 37 | | 47 | 48 | 41 | | 55 | 41 | 29 |
| **5** | **87** | Սերբիա | 39 | 8 | | 49 | 37 | 53 | 35 | | 32 | | 44 | 34 | 32 |
| **6** | **89** | Բոսնիա և Հերցեգովինա | 38 | 7 | | 41 | 37 | 44 | 35 | | | | 29 | 39 | 38 |
| **7** | **93** | Կոսովո | 37 | 5 | | 37 | | 36 | 35 | | | 35 | | | 43 |
| **8** | **93** | Մակեդոնիա | 37 | 7 | | 41 | 20 | 47 | 35 | | | | 33 | 43 | 39 |
| **9** | **99** | Ալբանիա | 36 | 8 | | 37 | 37 | 42 | 35 | | 41 | | 39 | 30 | 29 |
| **10** | **105** | **Հայաստան** | **35** | **6** | | **33** | | **39** | **35** | | **32** | | **51** | | **21** |
| **11** | **117** | Մոլդովա | 33 | 9 | | 33 | 37 | 33 | 47 | | 32 | 27 | 29 | 28 | 26 |
| **12** | **120** | Ուկրաինա | 32 | 9 | | 41 | 20 | 36 | 35 | 29 | 32 | | 34 | 36 | 22 |
| **13** | **124** | Ղազախստան | 31 | 9 | | 25 | 20 | 24 | 35 | 48 | 27 | | 46 | 34 | 17 |
| **14** | **132** | Ղրղզստան | 29 | 7 | | 37 | | 30 | 22 | | | 35 | 31 | 27 | 20 |
| **15** | **138** | Ռուսաստան | 28 | 9 | | 33 | 20 | 24 | 22 | 34 | 24 | | 42 | 33 | 21 |
| **16** | **152** | Ադրբեջան | 25 | 6 | | 25 | 37 | 21 | 35 | | 24 | | | | 9 |
| **17** | **152** | Տաջիկստան | 25 | 6 | | 17 | | 21 | 22 | | | 27 | 52 | | 12 |
| **18** | **158** | Ուզբեկստան | 23 | 7 | | 21 | 20 | 21 | 22 | | | 18 | | 34 | 23 |
| **19** | **161** | Թուրքմենստան | 20 | 5 | | 21 | 20 | 21 | 22 | | | | | | 15 |

Աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸԻ արժեքները 50-ից ցածր են, իսկ ԿԸԻ աշխարհի միջին ցուցանիշը 2018 թվականին կազմել է 43: ՀՀ-ն ԿԸԻ ցուցանիշով զիջում է աշխարհի միջին ցուցանիշը 8 միավորով: ԿԸԻ ամենաբարձր ցուցանիշն ունեցող տարածաշրջաններն են Արևմտյան Եվրոպան և Եվրոպական Միությունը (ԿԸԻ միջին արժեքը՝ 66), իսկ ամենացածր ցուցանիշով աչքի են ընկնում

[13] Աղյուսակում 3-ում դիտարկվել են Աղյուսակ 2–ում ընդգրկված ցուցանիշներից բացի հետևյալ ցուցանիշները՝

1. AFDB - Աֆրիկյան զարգացման բանկի 2016թ. «Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում»
2. BF (SGI) - Բերթելսմանի հիմնադրամի «Կայուն կառավարման» 2018թ. ցուցանիշներ
3. EIU - Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ («Էկոնոմիստ» թերթի հետազոտական բաժնի) «Երկրի ռիսկայնության» 2018թ.վարկանիշ
4. IMD - Մենեջմենթի զարգացման ինստիտուտի Համաշխարհային մրցունակության 2017թ. տարեգրքի «Գործադիր ղեկավարների կարծիքի հարցում»
5. PERC - «Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվության» Ասիական հետազոտական-վերլուծական 2018թ. տեղեկագիր
6. WB - Համաշխարհային բանկի «Երկրի հանրային քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի 2017թ. գնահատում»
7. WJP - Արդարության համաշխարհային ծրագրի «Օրենքի գերակայության համաթվի 2017-2018թթ. փորձագիտական հարցում»

Անդրսահարյան Աֆրիկան (ԿԸԻ միջին արժեքը՝ 32) և Արևելյան Եվրոպան և Կենտրոնական Ասիան (ԿԸԻ միջին արժեքը՝ 35):

Զեկույցով 2018-ին լիովին ժողովրդավար երկրների ԿԸԻ միջին արժեքը գնահատվել է 75, ժողովրդավարության անբավարար մակարդակ ունեցող երկրների դեպքում այն կազմել է 49, ավտորիտարիզմի տարրեր պարունակող հիբրիդ վարչակարգերի դեպքում՝ 35, իսկ ավտորիտար երկրների դեպքում՝ 30:

**Գծապատկեր 4: ՀՀ և այլ տարածաշրջանների ԿԸԻ գնահատականները**




2018թ. ԿԸԻ դասակարգման աղյուսակը գլխավորում են Դանիան և Նոր Զելանդիան՝ համապատասխանաբար 88 և 87 միավորներով: Աղյուսակը եզրափակում են Սոմալին, Հարավային Սուդանը և Սիրիան՝ համապատասխանաբար 10, 13 և 13 միավորներով:

Զեկույցի շրջանակներում Թուրքիան, Բոսնիան և Հերցեգովինան, Վրաստանը, Ուկրաինան, Մակեդոնիան և Հայաստանը առանձնացվել են մյուս տարիներին առավել դրական սպասումների տեսանկյունից:

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*